

Է. Գ. Աղայան

ՊԱՐՍԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Յոթերորդ դարի առաջին կեսին, երեք ճակատամարտերի հետևանքով, Իրանը վիրջնականապես և ամբողջությամբ նվաճվեց արաբների կողմից, Վերջին Սասանյան Հաղկերտ Երրորդի տապալումով անդառնալիորեն պատմության դիրկն անցավ Սասանյան հարստության չորսհարյուրամյա արքայական փառքը։ Արաբները վերջ տվին իր ներսում արդեն քայքայվել սկսած Սասանյան Իրանի անկախությանը և նրա տերն ու անօրենը դարձան։ Սակայն արաբական նվաճումները դրա հետ միասին վերջ տվին նաև Իրանի տնտեսական քայքայմանը, թեև, իհարկե, ոչ ընդմիջադեպ։ Նրանք երկիրն աղատեցին հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալների միջև եղած և օրափուր սրվող հակասություններից՝ մի կողմից, և համեմատաբար թեթևացրին բնակչության հիմնական մասը կաղմող գյուղացիության դրությունը՝ հարկերի որոշ թեթևացումով՝ մյուս կողմից։ Պարսիկ ֆեոդալների անընդհատ պայքարի գորղյան հանգույցը ժամանակավորապես լուծվեց արաբական զորքերի կողմից, և բոլորովին քայքայված երկիրն սկսեց աստիճանաբար կարգի ընկնել։¹ Իայց տիրող արաբները, չնայած իրենց ամբողջ հզորությանը, չէին կարող հաշվի չառնել Իրանի մոտիկ անցյալը, հատկապես նրա վարչական սխտեմը, խալիֆային իր տիրած երկրների կառավարման գործում հաճախ հետևում էր պարսիկների օրինակին։ Եվ այդ էր պատճառը, ահա, որ հենց Արբասյան խալիֆների օրոք պարսիկ ֆեոդալներն սկսում են մեծ դեր խաղալ խալիֆային կյանքում։ Բավական է հիշել Բարմեյան տոհմի խաղացած դերը խալիֆային մոտ հիսուն տարվա ընթացքում, որպեսզի պարզ լինի պարսից ֆեոդալական արխատկրատիայի նշանակությունն արաբական պետության մեջ։ Հարուն-Ալ-Ռաշիդի որդի Ալմամուն խալիֆն այնքան առաջ գնաց այդ քաղաքականության մեջ, որ վիճարկվող գահին տիրանալու և հակառակորդներին հաղթելու համար հենվեց Իրանի արևելյան շրջանի ֆեոդալների վրա, իսկ գահին տիրելուց հետո ամբողջ խորասանը՝ Մերվ քաղաքով հանդերձ՝ ի տրիտուր հանձնեց նշանավոր պարսիկ Թահիրի կառավարմանը։ Իայց հենց այդ բանով էլ սկսվեց պարսից անկախության վերածնունդը։ Թահիրը և նրա հաջորդները բոլորովին յուրովի դիտեցին իրենց դիրքը։ Նրանք ուղղակի խորասանի տերը հռչակեցին իրենց՝ հիմնելով Թահիրյան հարստությունը, բայց պաշտպանելով դեռևս վասսալական հարաբերությունները խալիֆային նկատմամբ։ Իրանի անկախությունը էլ ավելի մեծացավ Սաֆարյանների հարստության շրջանում։ Հարստության հիմնադիրը՝ Յակուբը, որ Սաֆար (պղնձագործ) մականունն էր կրում, տապալեց Թահիրյաններին և հիմնեց Սաֆարյան թագավորությունը։ Նա, ճիշտ է, խալիֆային զորքերի կողմից պարտվեց,

¹ А. Болотников. «Омар Хайям». «Восток», сборник II, М.-Л., 1935, стр. 164.

բայց զա չխանգարեց, որ, այնուամենայնիվ, ավելի անկախ լինի խալիֆաթից. քան իր նախորդները: Դրանցից ավելի հզոր գտնվեցին Անդրամուդարիայի (Մավերաննահր, Tronsoxania) իրանական տիրակալները՝ Սամանյանները: Նրանք X դարում խլեցին Սաֆարյաններից Խորասանն ու Սաղիստանը և ստեղծեցին խալիֆաթից իրապես անկախ մի տերություն, որ տարածվում էր Բուխարայից մինչև Պարսից ծոցը և Պարսկական Բքսից մինչև Հնդկաստան: Այդպիսով, ահա, Սամանյաններն ստեղծեցին նոր և անկախ Իրանը: Սակայն նրանք էլ չկարողացան երկար ժամանակ պետությունն իրենց ձեռքում պահել: Իրենց թագավորության հիմքերն անխախտ պահելու քաղաքականության մեջ նրանք՝ հետևելով խալիֆաթի օրինակին՝ ստեղծում էին թուրք ստրուկներից կազմված թիկնապահ զորքեր: Հենց այդ սովորությունն էլ նրանց կործանման պատճառը դարձավ: Թուրք ստրուկը, մտնելով այդ, այսպես կոչված, պրետորական զվարդիաները, կարող էր ժամանակի ընթացքում հասնել բարձրագույն աստիճանի: Անձնվեր ու աչքաբաց թուրք-զվարդիականը, որոշ ժամանակից հետո, կարող էր հասնել նույնիսկ առանձին զավառի կուսակալի աստիճանին: Եվ այդպիսի մի թուրքի հղորդության առջև էլ, ահա, ծնկի չոքեցին Սամանյանները: Տասներորդ դարի երրորդ քառորդում Ասամանյան էմիր Արդ-էլ-Մելիքի (954—961) օրոք Խորասանի կուսակալը դարձավ բարձր աստիճանի հասած թուրք ստրուկ զվարդիական Ալի-Թեգինը: Նա մեծ նշանակություն էր ստացել ոչ միայն զորքի մեջ ունեցած յուր ազդեցությամբ, այլև իր առասպելական հարստությամբ. սակայն Ալի-Թեգինը չկարողացավ երկար ժամանակ վայելել կուսակալության բարիքներն ու էմիրի շնորհները: Նրա նշանակվելուց չէր անցել դեռես մի տարի, որ էմիր Արդ-էլ-Մելիքը մեռավ (961): Սկսվեցին Արևելքին հատուկ խռովություններն ու պայքարը զահին տիրանալու համար: Այն արքայորդին, որի գահ բարձրանալը պահանջում էր Ալի-Թեգինը, տապալվեց հակառակորդ պարտիայի կողմից, և բուխարական էմիրների գահի վրա հայտնվեց հանգուցյալ էմիրի եղբայրը (Մանսուր Ա, 961—976), որի թեկնածության դեմ էր եղել Ալի-Թեգինը: Միանգամից խախտվեց Ալի-Թեգինի դիրքը և ընկավ հեղինակությունը: Նրանից խլվեց նաև Խորասանի կուսակալությունը. հաստատապես կարելի էր, իհարկե, սպասել նաև կալվածքների բռնագրավումը:

Թրքական զվարդիայի մեջ Ալի-Թեգինն, այնուամենայնիվ, գտավ մի քանի հազար նվիրված համախոհներ, որոնք ամբողջապես բաժանում էին նրա դժգոհությունն ու ցասումը Սամանյան հարստության կողմից իր բազմամյա հավատարիմ գինվորի նկատմամբ ունեցած «անշնորհակալության» համար և պատրաստ էին մահ ընդունել հանուն իրենց զորավարի: Ալի-Թեգինը նրանց հետ փախավ... Աֆղանական լեռների ետևը, Ղազնին քաղաքը... այնտեղ տապալեց տեղական իշխանիկին և հիմնեց իր սեփական՝ Ղազնինյան թուրքական անկախ տերությունը:

Ղազնինի լեռնային դիրքը վատ բնական ամրություն չէր նրա համար, և այդ պատճառով էլ Ալի-Թեգինը կարող էր չփախենալ սամանյան զորքից, մանավանդ որ նա (զորքը՝ Լ. Ա.) սովոր չէր գործել լեռներում: Բայց և որոշել զրաված մարզի սահմանները նրան չհաջողվեց. ասենք, նա էլ մի տարուց հետո մեռավ (963):

Նրա որդին Ղազնինի նախկին տիրողի դեմ վարած պայքարում ստիպ-

ված եղավ փախչել Բուխարա. որպեսզի Սամանյաններից օգնութիւն խընդրի ե, հասկանալի է, ճանաչի իրեն իբրև Սամանյանների վասսալ:

Նրա երկու հաջորդները՝ ստրուկ թուրքերից՝ Նույնպես իրերի վիճակը ոչնչով չփոխեցին, մինչև. վերջապես, Ղազնինի իշխանութիւնն անցավ Ալփ-Թեգինի փեսային, որ Նույնպես գնված թուրք ստրուկներից էր և հանգուցյալի աղջկա հետ ամուսնանալով, ունեցել էր նրանից որդի՝ Մահմուդին: Մահմուդի այդ թուրք հայրը կոչվում էր Սարուք-Թեգին (977—997):

... Ինչպես և իր նախորդը, Սարուք-Թեգինն իրեն ճանաչում էր որպես Սամանյանների վասսալ, դրամների վրա իր անունից վեր դրոշմում էր Սամանյան տիրոջ անունը և մզկիթում իր աղոթքների մեջ հիշում էր նրա անունը:

Դեպքերը ցույց տվին, որ Ղազնինի իշխանութիւնը գտնվում է տաղանդավոր ձեռքում: Սարուք-Թեգինին հաջողվեց աստիճանաբար ընդարձակել Ղազնինյան իշխանութիւն սահմանները և՛ դեպի հարավ-արևմուտք՝ Սևաստանի ու Բելուջիստանի մարզերը, և՛ դեպի հարավ-արևելք՝ լահուրյան ռաջային հարկատու աֆղանների մարդի խորքերը, իսկ այնտեղից էլ՝ դեպի իր իսկ ռաջայի մարզը, այսինքն՝ Հնդկաստանի հյուսիսային ծայրամասերը:

...Անցավ Սարուք-Թեգինի իշխանութիւն 17 տարին, և հասավ այն պահը, երբ Բուխարայի էմիրն զգաց իր զազնինյան անվանական վասսալի իրական օգնութիւն կարիքը (994): Բուխարա մայրաքաղաքը հենց նոր էր ենթարկվել թուրքերի արշավանքներին՝ հյուսիսից, ամեն տեղ Անդրամուդարիայում (Մավերաննահր) տեղի էին ունենում ներքին խռովութիւններ. իսկ Քորասանում և Մերվում երկու զորավար վասսալներ միացել էին և ապստամբել էմիրի դեմ:

Սամանյան տերութիւնն այդ երկու խռովարար վասսալներին զսպելու համար իրեն օգնութիւն կանչեց երրորդին՝ Սարուք-Թեգինին:

Նա իր խիզախ թուրքերի և աֆղանցիների հետ գոհունակութիւնով հայտնվեց ու հաջող գերծոցութիւններ վարեց... Արդյունքն այն եղավ, որ Բուխարայի էմիրի անհնազանդ վասսալները պարտվեցին և էմիրը, իբրև վարձատրութիւն, զսպված Քորասանի կուսակալութիւն կառավարումը հանձնեց Ղազնինյաններին՝ Սարուք-Թեգինի որդի Մահմուդին: Իսկ ինչպես հայտնի է, Քորասանի կուսակալութիւնը Սամանյան տերութիւն մեջ շատ անկախ էր Բուխարայի կենտրոնական իշխանութիւնից¹:

Մահմուդը մնաց Քորասանում մինչև հոր մահը, որից հետո, 999-ին տիրացավ զազնինյան գահին և, ընդարձակելով յուր տերութիւն սահմանները, վերջապես կործանեց Սամանյան հարստութիւնն ու ստեղծեց Ղազնինյան անկախ ու հզոր պետութիւնը: Սակայն իր տիրապետութիւն ավելի քան երեսուն տարիների ընթացքում ստեղծած այդ մեծ ու հզոր պետութիւնը Նույնպես չկարողացավ երկար ժամանակ պահպանել իր գոյութիւնը: Մահմուդի մահվանից (1030) հազիվ մի տասնամյակ էր անցել, որ 1035 թվին կիրգիզական ստեպներից՝ Սիր-Դարյայի ստորին հոսանքի ափե-

¹ А. Крымский, Истории Персии, ее литературы и духовной теософии, М. 1914. ч. 1, стр. 71—76.

րից ներգաղթած ու խորասանում (Մերվի շրջանում) հաստատված սելջուկները Ղազնինյան պետությունից խլեցին խորասանը (1040 թ.)։ Սելջուկյան երևու առաջնորդները՝ Չաղրի-Բեկ ու Թողրուլ-բեկ եղբայրները՝ տիրանալով խորասանին (Մերվ քաղաքով հանդերձ) և հաստատելով այնտեղ իրենց գահը շարունակեցին իրենց նվաճումները երկու ուղղությամբ։ Չաղրի-Բեկը՝ դեպի արևելք՝ Ղազնինյանների տիրապետությունը, Թողրուլ-բեկը՝ դեպի արևմուտք՝ Զիարիդների և Բույիդների տերությունները։ Երա արդյունքն այն եղավ, որ արդեն 1058—59 թվականներին Ղազնինյաններն ամբողջապես զրկվեցին իրենց պարսկական տիրապետություններից, իսկ Թողրուլ-բեկը 1042—1055 թվականների ընթացքում խլելով Զիարիդներից Գուրգանը՝ Թարաքիստանով հանդերձ, և Բույիդներից՝ նրանց բոլոր տիրապետությունները, հաղթականորեն մտավ Բաղդադ (1055) և 1058-ին «ուղղափառների գլխավորի» կողմից սուլթան հռչակվեց։ Այսպես, ահա, արաբների կողմից նվաճված Իրանում խալիֆաթի թուլացման ու քայքայման շնորհիվ մոտ երկու դարում (9-րդ դարի առաջին քառորդի վերջից մինչև 11-րդ դարի կեսերը) իրար հաջորդեցին չորս հարստություններ, մինչև որ վրա հասան սելջուկյան ավերիչ արշավանքները։

* * *

Արաբական տիրապետությունը, սակայն, միայն քաղաքական անկախությունից չէ, որ զրկեց պարսիկներին։ Նվաճողների ազդեցությունը թափանցեց ժողովրդական կյանքի ուղղակի խորքերը, փոխելով և վերակառուցելով հնացած կենցաղը¹։

Ճապալելով Սասանյաններին ու տիրելով երկրին՝ արաբները գոյություն ասպարեզից վտարեցին նաև զրադաշտական կրոնն ու Սասանյանների շրջանի լեզուն՝ պահլավերենը։ Տարածելով մահմեդականությունը, արաբները կործանեցին պահլավական այն հարուստ կուլտուրան ու զրականությունը, որ ստեղծել էին պարսիկները մոտ մեկ հազարամյակի ընթացքում։ Նվաճված պարսիկները շուտով հասկացան, որ հին, մանավանդ հին կրոնին կառչելն այլևս օգուտ չի բերի իրենց։ սկսվեց պարսիկների մասսայական կրոնադարձությունը։ մահմեդականությունը տարածվում էր անսպասելի արագությամբ։ Եվ, ահա, նորադարձ պարսիկների՝ առհես ինքնին ծառացավ արդեն իսկ մահվան դատապարտված պահլավերենից հրաժարվելու և ղուրանի լեզուն սովորելու խնդիրը, որին և նրանք անհապաղ ձեռնարկեցին։ Այդ խնդիրը համեմատաբար հեշտությամբ լուծվեց գործին ժրջան կերպով ձեռնարկած ուշիմ պարսիկների կողմից։ Շուտով պարսկական մտավորականությունը կատարելապես տիրապետեց նվաճողների լեզվին։ երկար ժամանակ չէր անցել նվաճումներից, և, ահա, պարսիկների գիտական ու բանաստեղծական ոգին բարբառեց արաբերեն լեզվով։ Հրաժարված ազգային լեզվից, նվաճվածները մի առժամանակ ամեն ինչ վարում էին ղուրանի սրբազան լեզվով։ Ղուրանի լեզուն դուրս մղեց պահլավերենը

¹ Լ. Յ. Բերտելս, Очерк истории персидской литературы, Л., 1928, стр. 22.

² Անշուշտ նկատի է առնվում բարձր դասը՝ ինտելիգենցիայով հանդերձ. ստորին խավը խոսում էր ժողովրդական պարսկերենով, որ և հետագայում պարսիկ նոր գրականության լեզուն դարձավ։

գրականությունից, կրոնից, պետությունից և պարսկական մուսան երգեստ արարերենով¹ Այդպես շարունակվեց շուրջ հարյուր տարի Նվաճումներից հետո Օմայան խալիֆաթի ամբողջ գոյություն շրջանը պարսիկների համար այսպես ասած՝ վերածնունդի նախապատրաստական շրջանը հանդիսացավ։ Տիրապետելով արաբերեն լեզվին, պարսիկներն սկսեցին ուսումնասիրել նաև տիրողների կուլտուրան, գիտությունը, գրականությունն ու արվեստը։

Արաբների տիրապետության այդ շրջանում պարսից աղգային գիտությունն ու գրականությունն իր դադարի շրջանին անցավ, պահպանված գրականությունը դարձավ մի բուն գրադաշտականների սեփականությունը և իր գոյությունը պահպանեց նրանց մոտ, իսկ պարսից աղգային նոր գիտությունն ու գրականությունը դեռևս գոյություն չուներ։ Ծիշտ է, կային բազմաթիվ գիտնականներ ու բանաստեղծներ, որոնք յուրացրել էին Նվաճողների ամբողջ մտավոր հարստությունը, սակայն նրանք էլ, երբ գործն ստեղծագործելուն էր հասնում, գրում էին արաբերեն լեզվով։ Արաբական գրականությունից մեզ հայտնի են շատ բանաստեղծներ, որոնք ծագումով պարսիկներ են, բայց ղրել են արաբերեն լեզվով։ Այսպես, օրինակ՝ տառը-տասնմեկերորդ դարի հեղինակ Նիշափուրցի Քաալիբի կազմած արաբական բանաստեղծության ժողովածուի երրորդ ու չորրորդ հատորները նվիրված են արաբերեն լեզվով գրած պարսիկ բանաստեղծների ստեղծագործություններին²։ Սակայն պարսիկների ղերն արաբական կամ, ավելի ճիշտ, արաբալեզու գիտության ու կուլտուրայի զարգացման գործում սկսվեց առաջին հերթին թարգմանական աշխատանքով։ Եթե Օմայան խալիֆաթի գոյության առաջին կեսում արաբները բարձրից էին նայում Նվաճված պարսիկների անցյալի կուլտուրային ու գրականությանը, ապա՝ երկրորդ կեսից արդեն սկսվում է հակառակ երևույթը։ Պարսիկներն իրենք թարգմանում էին արաբերեն լեզվով պահպանված գրականությունը, որով և արաբական մտավորականությունը ծանոթանում էր պահպանված հարուստ կուլտուրային։ Եվ, ահա, սկսվում է թարգմանական մի եռանդուն աշխատանք, որի շնորհիվ արաբերենի են թարգմանվում պահպանված գրականության լավագույն նմուշները։ Հատկապես նշանավոր է VIII դարի թարգմանիչ Իբն-էլ-Մուքաֆֆուսն (721?—757?), որ արաբերենի է թարգմանել պահպանված բազմաթիվ գրքեր, որոնց թվում՝ «Քալիլա ու Դիմնա» հնդիրանական վեպը, «Սաղգակի գիրքը» և պարսից թագավորների պատմությունը՝ «Տերերի գիրքը» (խաթայնամակ)։ Խիստ աղգային ոգով տոգորված Օմայանները հաճախ արգելում էին պահպանված այդ գրքերի օգտագործումը, հայտնի է խալիֆ Մութասիմի (833—842) պալատական սկանավոր գործիչ պարսիկ Աֆղինի (մահապատժի ենթարկված 841-ին) դատը, թլպատված չլինելու համար, որի ժամանակ մեղադրում էին նրան նաև պահպանված գրքեր կարդալու մեջ։ Սակայն որքան էլ Օմայանները հակառակ լինեին դրան, այնուամենայնիվ ի վիճակի չէին սկսվածի առաջն առնել։ Արաբ մտավորականները՝ ծանոթանալով պահպանված, հատկապես սասանյան շրջանի գրականությանը՝ հասկացել

¹ Darmesteter, Les origines de la poésie persane, Paris, 1887, p. 3.

² Крэмский, там же, 168.

էին նրա արժեքը և Գանասիրաբար ուսումնասիրում էին այն: Այդ գրականությունն այնպիսի բարձր արժեք էր ստացել արար մտավորականների աչքում, որ նրանցից մեկը բանաստեղծ Էլ-Աթթարին (IX դար) հետեյալ արտահայտութեամբ է ձևակերպել իր դատողությունը. «Եվ որն է ուրիշ տեղ կան արդյոք մտքեր, բացի պարսկական (իմս՝ միջին պարսկական կամ պահլավական) գրքերից: Պերճախոսությունն ու դասական լեզուն մերն են, իսկ մտքերը՝ նրանցը»: Պահլավական գրականության նկատմամբ եղած հետաքրքրությունն ու բարձր արժեքավորումը, որ արտահայտված է այդ դատողության մեջ, հատկապես ուժեղանում է արքայան խալիֆների օրոք և այն աստիճանին է հասնում, որ եթե տիրապետության առաջին շրջանում պարսիկներն էին սովորում արաբերեն լեզուն ու յուրացնում նրանց կուլտուրան, իսկ արաբները արհամարհանքով էին նայում տիրվածների կուլտուրային, ապա՝ հետագայում արաբներն էլ իրենց հերթին սկսում էին սովորել պահլավերեն լեզուն և յուրացնել նրանց հագարամյա գրականությունն ու կուլտուրան: Այս պայմաններում է, ահա, որ հատկապես արքայան խալիֆաթի օրոք արաբալեզու գիտության ու գրականության զարգացման գործում մենք համատեղ գործունեության մեջ ենք տեսնում արաբ ու պարսիկ մտավորականներին: Արքայանների օրոք է, որ իր զարգացման բարձր աստիճանին է հասնում գիտությունն իր բոլոր ճյուղերով (աստվածաբանություն, կրոնա-իրավաբանություն, բժշկություն և այլն), և հենց այդ ժամանակ է, որ պարսիկների համար վերջանում է, այսպես կոչված, նախապատրաստական շրջանը: Շուրջ հարյուր հիսուն տարվա ընթացքում պարսիկները խորապես ուսումնասիրեցին տիրողների ամբողջ գիտությունն ու կուլտուրան և դրանից հետո միայն աստիճանաբար ստեղծեցին իրենց ազգային գրականությունը, իհարկե, արդեն ոչ զրադաշտական-պահլավական, այլ՝ մահմեդական ոգով: Առաջին հարցը, որ ծառանում էր պարսիկների առջև ազգային գրականությունն ստեղծելու գործում, լեզվի հարցն էր. ինչ լեզվու պետք է գրի տոնվեր ազգային նոր գրականությունը. պահլավերենը գործածությունից դուրս էր մղված և IX—X դարերում արդեն հասկանալի չէր միջին մակարդակի վրա կանգնած պարսկին. նա գարձել էր զրադաշտական կրոնի ու նրա հետևորդների լեզուն: Ուրեմն՝ ընտրությունն այսպես թե այնպես կանգ էր առնում իրականում արդեն իսկ կյանքի կոչված ու գոյության իրավունք նվաճած, ժողովրդի առօրյա խոսակցության լեզուն դարձած և ժողովրդական ստեղծագործությունների միջոցով էլ բավականաչափ մշակված նոր պարսկերենի վրա: Եվ, իրոք, այդ լեզուն էլ դարձավ պարսկական նոր գրականության լեզուն, գրականություն, որ մի ամբողջ հագարամյակի ընթացքում հարստացրել է համաշխարհային գրականությունն իր անզուգական կոթողներով: Այդ լեզուն, չնչին փոփոխություններով, այժմ էլ մնում է իբրև պարսկական ժամանակակից պետական, գրական ու գիտական լեզու:

Հենց լեզվի հետ միասին էլ ծագում էր նաև այբուբենի խնդիրը, որ պարսիկները լուծեցին ավելի հեշտությամբ. նրանք ուղղակի յուրացրին արաբական այբուբենը:

Վերջապես գրականագիտական տեսակետից ավելի կարևոր էր տազա-

չափության հարցը. ինչպիսի չափով (метрика) պետք է գրվեն պարսկերեն բանաստեղծությունները: Այստեղ էլ արաբական տաղաչափությանը լիովին տիրապետած պարսիկները վերցրին հենց արաբականը,¹ և փորձը ցույց տվեց, որ թնոր հազուստը պարսկերեն լեզվին սաղում է անկարելիության չափ լավ: Արաբական չափով գրված պարսկերեն բանաստեղծությունը հյուսվում է այնպես հարթ ու սահուն, այնպես զգվում է լսելիքը, որ նույնիսկ դժվար է ճանաչել այդ չափի մեջ օտարը, զրսից բերվածը, փոխառյալը²: Իացի չափից, արաբական գրականությունից պարսիկները փոխ առան նաև քնարերգական ժանրերը՝ քասիդն ու զազելը: Արաբական տաղաչափությամբ էլ գրված է, ահա, պարսկական հենց առաջին բանաստեղծությունը, 809 թվին, երբ Հսրուն-Ալ-Խաշիդի որդի Մամունը հաղթականորեն մտավ Միրվ քաղաքը. պարսիկ բանաստեղծ Աբրաս Մերվիցին ձոնեց նրան մի ներբող, որ և ավանդաբար նոր պարսկերենով գրված առաջին բանաստեղծությունն է համարվում: Ահա Աբրաս Մերվեցու այդ ներբողը.

Ո՛վ դու հղոր, որ վե՛հ ճակատդ երկնքին ես արդ պարզել.
Զույգ ձեռքերդ՝ բարիքներով մինչ բեռները տարածել,
Պատշաճ ես դու խալիֆական գահին, ինչպես բիրը աչքին.
Վայել՝ աստծու սուրբ կրոնին, ինչպես աչքերը՝ մեր դեմքին:
Ինձնից առաջ այսպիսի երգ և ոչ մի մարդ զեռ չի գրել,
Այս տեսակը պարսից լեզվին նույնիսկ հայտնի էլ չի եղել:
Իայց այս զովքը՝ քեզ նվիրված, նրա համար եմ ես գրում,
Որ ստանա պարսից լեզուն՝ քեզ զովելուց՝ վայելչություն:

Վերջին չորս տողերն արևելագետների միջև վիճարանության առիթ են դարձել. արդյո՞ք դա առաջին պարսկերեն բանաստեղծությունն է, արդյո՞ք դա իսկապես 809 թվին է գրված, մի բան, որ կասկածելի է դառնում լեզվի ու չափական արվեստի կատարելությամբ, մանավանդ, եթե ընդունելու լինենք բանաստեղծի այն խոսքերը, թե մինչ այդ «այս տեսակը պարսից լեզվին նույնիսկ հայտնի էլ չի եղել»:

Այդ խնդրի քննությունը, սակայն, մեզ շատ կհեռացնե՛ր բուն նյութից: Կարևորն այստեղ այն է, որ Աբրասյան խալիֆների և Սորասանի պարսիկ տիրակալների՝ Թահիրյանների շրջանից արդեն սկիզբն է առնում պարսից նոր գրականությունը: Ո՛րչա՛ն է. Թահիրյանները չափազանց արաբասեր էին և արհամարհանքով էին վերաբերվում ազգային-պարսկական կուլտուրային ու գրականությանը. բայց նրանց հաջորդած Սաֆարյաններն արդեն կանգնեցին պարսից գրականության, պարսկական մեղմագծիկ քնարերգության իսկական զարգացման փաստի առջև և իրենք էլ սկսեցին հովանավորել այդ ազգային բանաստեղծությունը: Վերջապես, Սա-

¹ Պարսկական տաղաչափություն. ասենք, գոյություն էլ չուներ. ենթադրվում է որ պաշտոնական շրջանում եղել են երգեր ու չափածո բանավոր ստեղծագործություններ, որոնցից իբրեւ նմուշ բերվում է սովորաբար Ղուրաին (քառյակ). բայց այդ էլ բացի նրանից, որ դեռևս վիճելի է, չէր թեթևացնում պարսիկների գրությունը: Անհրաժեշտ էր մշակված տաղաչափություն:

² БертеАсс, առդ, 24:

³ Ինչպես այս, այնպես էլ մյուս բոլոր մեջբերումները թարգմանված են մեր կողմից է. Ա.

մանյանների շրջանում պարսկական բանաստեղծությունը հասավ յուր օաղ-
աաս աստիճանին։ Սամանյան կուլտուրական տիրակալներն ամեն կերպ
օժանդակում, հովանավորում էին գիտուններին ու բանաստեղծներին։ Իսկ
այդ հովանավորության արդյունքն այն եղավ, որ X դարը դարձավ պարսից
նոր գրականության ու գիտության ոսկեդարը։ Զարգացնելով պարսկական
գրականությունն աղգային լեզվով, Սամանյանները չէին հրաժար-
վում նաև արաբալեզու և արաբական գրականությունից ու գիտությունից։
Հենց նրանց շրջանում էլ րազմաթիվ պարսիկ բանաստեղծներ գեռևս գրում
էին արաբերեն լեզվով, և Թաալիբի հիշյալ ժողովածուի չորրորդ հատորն
ամբողջությամբ ընդգրկում է միայն Սամանյան շրջանի պարսիկ բանա-
ստեղծների արաբերեն ստեղծագործությունները։

Ընչ վերաբերում է գիտությանը, ապա նա գրեթե բացառապես արա-
բերեն լեզվով է գրվում։ Հայտնի են այդ շրջանում կազմված երկու հանրա-
գիտարաններ, որոնք ընդգրկում են դարի գիտության բոլոր ճյուղերը,
դրանցից առաջինը Բասրայի «հավատարիմ բարեկամներին» (Իխվան-էս-
Սեֆա) կազմած հանրագիտարանն է, երկրորդը՝ Քոբեղմի կազմած ու սա-
մանյան էմիր Նուհ Երկրորդին (976—997) նվիրած «Գիտությունների բա-
նալին» (Մեֆաթիս ուլ-Ուլում)։ Վերջապես, չպետք է մոռանալ դարի փի-
լիսոփային, բանաստեղծին ու ամենանշանավոր բժշկին՝ Արու-Ալի-Իբն Սի-
նային, որ եվրոպայում հայտնի է Ավիցեննա աղավաղյալ անունով։ Նա իր
ժամանակի և նշանավոր պետական գործիչներից մեկն է, և՛ ամենամեծ
բժիշկը։ Նրա գրած բժշկական կանոնագիրքը՝ «Գիրք բուժման» (Գիթար-
Աղշաֆա) ոչ միայն Արևելքի, այլև եվրոպայի մասշտաբով գիտական մտքի
լավագույն արտադրանքներից մեկն է։ Այդ գիրքն ամենամեծ չափերով
օգտագործվել է եվրոպայում ընդհուպ մինչև XVII դարը։ Բայց պիսի նշա-
նակություն չի ունեցել ոչ մի գիրք և գեռևս տասնյոթերորդ դարում էլ
Արևմուտքում նա մեծ համբավ էր վայելում։¹ Գիտական մտքի այս ան-
նախընթաց զարգացման պայմաններում և տիրող էմիրների հովանավո-
րության տակ էր, ահա, որ ծաղկեց պարսկական նոր գրականություն Սա-
մանյանների օրով։ Բանաստեղծների մի ամբողջ շարան, քնքույշ քնարա-
կան ոտանավորների բազմաթիվ հեղինակներ իրենց փառաբանված անուն-
ներով զարդարում են Սամանյանների պսակը, բազմաթիվ քնարական
ստեղծագործություններ արտահայտում են պարսիկների նուրբ զգացում-
ները, երգում նրանց հոգու տառապանքը, խինդն ու տխրությունը։ Մեզ
հայտնի են աթու Սալիբի, Շահիդ-Բահլեցու և ուրիշների անունները, որոնց
ստեղծագործություններից մեզ չնչին հատվածներ են հասել միայն։ Այդ
հատվածները թեև մեզ հնարավորություն չեն տալիս ամբողջական գաղա-
փար կազմելու իրենց հեղինակների մասին, բայց և այնպես ցույց են տա-
լիս, որ նրանք չեն գիշում իրենց փառաբանված հաջորդներին։ Մեզ հա-
սած այդ սակավաթիվ բանաստեղծություններն այսօր էլ հուզել կարող
են ոչ միայն պարսկին, այլև ամենախստապահանջ ու նրբաճաշակ եվրո-
պացուն։ Դեռ ավելին։ ավելի քան մի հազարամյակ առաջ ապրած ու ստեղ-
ծագործած այդ բանաստեղծներն իրենց արտահայտած զգացումների քրեք-
շությամբ, արտահայտությունների յուրօրինակությամբ ու պարզությամբ

¹ Мейер-Штейнег и К. Зубоф. История медицины, Гиз, 1925, стр. 156.

«ավելի մոտ են մեզ, քան նրանց ավելի հռչակավոր հաջորդներից որևէ մեկը»¹ Սակայն Սամանյան շրջանի փառքն ու պարծանքն են կազմում ոչ վերոհիշյալ հեղինակները, այլ Ռուդեգին ու Դաքիթին, բանաստեղծներ, որոնք այսօր էլ հավասարապես դասվում են հետագայի ամենահռչակավոր բանաստեղծների շարքը, Ռուդեգին (մեռել է 951-ին կամ 954-ին), որ իր արտակարգ տաղանդի ու բեղմնավորության շնորհիվ «Բանաստեղծության ազամ» մականունն էր ստացել, Սամանյան Նասր Երկրորդի (914—943) պալատական բանաստեղծն էր, Խնչպես բոլոր ժամանակների պալատական բանաստեղծների, այնպես էլ Ռուդեգինի ստեղծագործությունների մի զգալի մասը կազմում են ներբողները, Վայելելով Նասր Երկրորդի սերն ու հովանավորությունը, լինելով նրա հետ ամեն տեղ՝ թե խնջույքների և թե որսորդությունների մեջ, Ռուդեգին բաղմամբիվ ներբողներ էր ձոնել յուր մեկենասին, ներբողներ, որոնց տակ ամենայն հաճույքով կարող էր ստորագրել Մահմուդ Ղազնևիցու հռչակավոր ներբողագիրը, յուր ժամանակի «բանաստեղծների արքան» (Մելիք-Աշ-Շուրա)՝ Ունսուրին, Մեծ բանաստեղծի բազմակողմանի տաղանդը, սակայն, չէր կարող, անշուշտ, սահմանափակվել միայն ներբողների նեղ շրջանակներով և չսահմանափակվեց, նրա ստեղծագործությունների ավելի մնայուն և մեղ համար ավելի հուզիչ ու հետաքրքրական մասն են կազմում քնարական-սիրային բանաստեղծությունները, որոնք իրենց ներթույլածքում ու ներդաշնակությամբ ընդունակ են հրապուրելու շատ սրտեր, Այդ քնարական բանաստեղծությունների մեջ նա միաժամանակ զովում է գինին, քարոզում կյանքի վայելքներից օգտվել և «քաղցրացնել հոգին» գինու թովչանքով։

«Սարդիոնի գույն ունեցող գինին այս,
Սարդիոնից հալած կասես տեսնելուց,
Իրականում երկուսն էլ մի տարր են, բայց
Այս սառած է իր վիճակով, իսկ նա՝ լույծ.
Չշոշափած՝ ներկեց ձեռքերդ երկու,
Չճաշակած՝ նոր կյանք տվեց քո հոգուն։

Իայց միայն գինին դեռ բավական չէ. գինին հաճելի է, զվարճությունն իմաստ է ստանում, երբ վայելում ես այն «սեւաշյա դեղեցկուհու» հետ. ուստի և՛

«Ուրախացիր դու սեւաշյա գեղուհու հետ միասին,
Ուրովհետեւ այս աշխարհը քամի, առակ է մի սին»։

Իայց այդ «քամին» էլ իր քմահաճույքներն ունի, և, այդ քմահաճույքին հիմա՝ մարդիկ երբեմն բախտը շնորհներն են վայելում, երբեմն ընդհանուրի գութն ու կարեկցությունը շարժում իրենց վիճակով, Ռուդեգին էլ վիճակվեց այդ հիասթափությունը, Նասր Երկրորդի անկումը ուժեղ հարված էր նրա համար, Կորցնելով իր հովանավորին, զրկված շնորհներից, նա շարունակում է դարձյալ երգել ու գյութել մարդկանց սրտերը, բայց այս անգամ նրա երգերում իշխում է ոչ ներբողների խրոխտ ու ինքնաբավ ոգին, ոչ էլ հաճույքների հեշտասեր ու պղծող զուռնը, Այս շրջանի նրա երգերում լսվում է արդեն վշտի ու թախծի մեղամաղձիկ ձայնը։

¹ Darmesteter, առջ. 6.

Երբ շուրթերս փակ, տեսնես ինձ մեռած,
 Եվ հոգուց, կրքից մարմինս զրկված.
 Սնարիս վերև նստիր ու ասա
 — Ես մեռցրի քեզ, արդ զղջում եմ բայց:

Հիրավի, նրա համար ժամանակն էր արդեն մտածել մահվան մասին. ոչ միայն հովանավորից ու շնորհներից զրկված լինելը, այլև տարիքն արդեն առիթ էին ծառայում այդ բանին: Նրա վիշտն օր-ավուր մեծանում էր ոչ միայն իր դրությամբ, այլև երիտասարդ հասակում վայելած կյանքի ու խորին ծերության մեջ կրած զրկանքների ու հիասթափության ծայրահեղ հակադրությամբ, որ նա այնքան վարպետորեն արտահայտել է յուր սքանչելի եղերերգում: Այդ վիշտը մոռանալու, հուսախաբության անդադար տվադատանքներից աղատվելու համար էլ, ահա, նա ապավինեց աստծու մարգարեին և իր կյանքի վերջին օրերն անցկացրեց աշխարհից ու մարդկանցից հեռու՝ իրադարձ մենության մեջ:

Իր տաղանդով Ռուդեգիից ետ չի մնում նաև բանաստեղծ-գրագալտական (և ոչ մահմեդական) Մուհամմեդը, որ իր բանաստեղծությունների նրբության ու զեղեցկության շնորհիվ էլ արժանացել է 'Իաթիֆի (քնքուն) մականվանը: Ռուդեգիի նման Դաթիֆին էլ երգում է սերը, կյանքի վայելքն ու գինին, բայց նա զրան ավելացնում է նաև իր զավանած գրագալտական կրոնը, որ այնպես ներգաշնակում էր իր վայելչասեր հոգուն:

Աշխարհի ողջ լավ ու վատից, չար ու բարուց այս կյանքի
 Ջորս բան միայն, չորս տարր ընտրեց իր կյանքի մեջ Դաթիֆին:
 Հակընթացուն շուրթերը վառ, մեղմ նվազը տավիղի,
 Զրագալտի կրոնը սուրբ և արնագուն այս գինին:

Սակայն Դաթիֆին միայն քնարական հատվածներով չէ, որ նվաճել է իր փառքը: Պատվեր ստանալով էմիր Նուհ Երկրորդից (976—997), նա ձեռնարկեց պարսկական էպոսի մշակմանը և սկսեց հենց իր սիրած նյութից՝ գրագալտ Մարգարեի հայտնվելուց ու Գուշտասպ (Վշտասպ) արքայի կողմից գրագալտական կրոնն ընդունելու և տարածելու պատմությունից: Նա գրեց այդ հատվածից հազար բնյթ (երկտող) և հենց դրանով էլ անսկնկալ կերպով փակեց իր կյանքը՝ սպանվելով իր սիրեցյալ ստրուկի կողմից ու կիսատ թողնելով պարսից էպոսի մշակումը:

Այդ մեծ գործը հանձն առավ և ի կատար ածեց մի ուրիշ բանաստեղծ՝ Սամանյանների շրջանում արդեն իր զրական գործունեություն սկսած, բայց հետո՝ Մահմուդ Ղազնինցու պալատում հռչակված Ֆիրդուսին: Նա յուր ամբողջ կյանքը նվիրեց այդ մեծ էպոսի՝ «Շահ-Նամեի» մշակմանը և ստեղծագործեց մի այնպիսի հոյակապ դուրյազնավեպ, որ համաշխարհային գրականության ամենալավ կոթողներից մեկն է հանդիսանում: Իր աներևակայելի տաղանդով, իր ստեղծագործության անհասանելի կատարելությունը նա նսեմացրեց իր նախորդների ու ժամանակակիցների փառքը յուր գեղարվեստական Մահմուդ Ղազնինցու պալատական բանաստեղծներին ու հալածանքի ենթարկվելով հենց նույն Մահմուդի կողմից: Բայց ոչ մի հալածանք այլևս չէր կարող մաղաչափ անգամ ստվեր ձգել այն փառքի վրա, որ նվաճել էր մեծ դուրյազնավեպի հանճարեղ հեղինակը: Նա

հաջորդներին իբրև ժառանգություն թողեց սի ստեղծագործություն, որի մեջ ամեն մարդ կարող է գտնել իր կաժեցած էպիզոդը և իր սիրած հերոսին: Իզուր չէ, որ «Շահ-Նամեն» պարսկական կյանքի գեղարվեստորեն մշակված հանրագիտարանն են համարում: Հիրավի «Շահ-Նամեն» մի հանրագիտարան հանդիսացավ իր հաջորդների համար: Հետագայի շատ ու շատ բանաստեղծներ են հայտնի, որոնք իրենց ստեղծագործությունների համար նյութ են քաղել «Շահ-Նամենից»: Իր ստեղծագործությամբ Ֆիրդուսին պարսից գրականության մեջ հիմնադրեց մի նոր ժանր՝ դյուցազներգությունը: Եվ հենց իրենից անմիջապես հետո հանդես են գալիս բազմաթիվ բանաստեղծներ, որոնք գրում են դյուցազներգություններ: Այդ դյուցազներգությունները, որոնք երբեք էլ չհասան իրենց նախատիպարի կատարելությանը և մեծ մասամբ ժառանգի ընթացքում մոռացման տրվեցին, իրենց բովանդակությամբ կարելի է բաժանել երկու կարգի: Առաջին կարգին պատկանում են այն դյուցազներգությունները, որոնց թեման անմիջականորեն, ուղղակի կերպով կապվում է «Շահ-Նամենի» հետ, մտնում է նրա մեջ, բայց «Շահ-Նամենում» մեջ է բերված ոչ ամբողջությամբ և չի զարգացված իբրև մի ամբողջական պատմություն: Երկրորդ կարգին են պատկանում այն դյուցազներգությունները, որոնց նյութը, թեև հեռավոր կերպով կապվում է «Շահ-Նամենի» հետ, բայց վերջինում բոլորովին տեղ չի գտել դյուցազներգության հիմնական նյութի հետ ունեցած ոչ անմիջական կապի շնորհիվ: Բայց սրանով չի սահմանափակվում «Շահ-Նամենի» դերը պարսկական պոեզիայի պատմության մեջ: Այդ մեծ դյուցազներգությունը, բացի դյուցազներգական պատմություններից, իր մեջ ընդգրկում է նաև սիրային-էպիկական հատվածներ, ինչպես, օրինակ՝ Բեժան ու Մանիժայի, Զալ ու Ռուդարի վեպերը: Այդ էպիզոդներն էլ, ահա, հիմք ծառայեցին մի այլ ժանրի հիմնադրման համար: Սկսեցին մշակել դարձյալ էպոսը, բայց արդեն ոչ միայն այն էպոսը, որի նյութն էր կազմում Իրանի դյուցազունների հերոսությունների պատմությունը, այլև այն, որ նկարագրում էր իրանական ասպետների կենցաղը, նրանց անձնական-ընտանեկան կյանքը, նրանց սիրային արկածները: Այդ սիրային կենցաղի վիպերգի հիմնադիրը հանդիսացավ Ֆիրդուսու հաջորդներից մեկը՝ Ֆախրեդդին Ասադ Գուրգանին: